Հավելված 1
«ՋԻ ԷՄ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ «Արտաքին աուդիտի ընտրության կարգ»

Արտաքին աուդիտի ընտրության հրապարակային մրցույթի ծանուցում

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

(օրինակելի ձև)

Մրցույթի կազմակերպման վայրը (հասցեն) **ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փողոց փակուղի, թիվ 8 շենք, թիվ 3/2 տարածք**

Մրցույթով կնքվելիք պայմանագրի առարկան **Իրականացնել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված 2025թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա և հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտը:**

Մրցույթի հայտերի ընդունման ժամանակահատվածը **12.01.2026-ից 23.01.2026թթ (ժ09:00-18:00):**

Մրցույթի հաղթողին որոշելու կարգը -
Մրցույթի հաղթողը որոշվում է «ՋԻ ԷՄ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ ընդհանուր ժողովի բաց քվեարկությամբ:

Մրցույթի հայտերի ներկայացման կարգը -
Մրցույթի հայտը ներկայացվում է փակ ծրարով՝ ծրարի վրա նշելով.

- մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված մրցույթի հայտի ներկայացման վայրը (հասցեն),
- մրցույթի անվանումը,
- հայտատուի անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը կամ կապի այլ միջոցները:

Մրցույթի հայտը պետք է պարունակի հետևյալ նվազագույն տեղեկատվությունը՝

- հայտի ծրարում առկա փաստաթղթերի ցանկը և էջերի քանակը.
- մրցույթի մասնակցի տվյալները, այդ թվում՝ անվանումը, գտնվելու վայրը (հասցեն), հեռախոսահամարը.
- Հայաստանի Հանրապետության տվյալ կազմակերպության կողմից աուդիտի անցկացման փորձի մասին տեղեկություններ.

- աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտոր(ներ)ի որակավորման մակարդակի և աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկություններ.
- աուդիտորական խմբում ներգրավվելիք աշխատակիցների որակավորման մակարդակի և աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկություններ.
- աուդիտորական ստուգման իրականացման մեթոդները, աուդիտի անցկացման և աուդիտորական եզրակացության ներկայացման ժամկետները, աուդիտի ընդգրկման բնագավառները.
- աուդիտի ծառայության արժեքը, ներառյալ հարկերը և այլ ծախսերը.
- այլ անհրաժեշտ տվյալներ և փաստաթղթեր ---------(ըստ հայեցողության)----------

Այլ տեղեկություններ ----------(ըստ հայեցողության)----------

Ընկերության տնօրենը մինչև մրցույթի հաղթողին ճանաչելու օրը կարող է պահանջել մրցույթի մասնակիցներից ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր:

«ՋԻ ԷՄ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ
Գործադիր Տնօրեն

Վ. Ստեփանյան